Է. ՏԱՐԻ — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 23 ՅՈՒՆԻՍ 1904 — ԹԻՒ 629

ՀԱՄԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 տլր.
Վեցամսեայ 1.50 »

Ռանուցման տողը առա ջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքին ամիսի անգամներու համար 20 0/0 զեղչ կրնայ։

Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀԱՐԻ ՏԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

R. P. Kalemcarian, Mechitharistengasse 4. Vienna (Autriche)

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեանս հասցեին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռքի
)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ձեռքի
)(15 ՍԱՆԹԻՄ)(

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՄԶԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԼՏԲ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ»

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

«ԴՐՕՇԱԿ»Ի ՀԵՌԱԳԻՐԵՐ

—)o(—

Մուշ 8/21 մայիսի
(Թիֆլիզի գծով)

Նոր մանրամասներ ապրիլի 22 ի բռնութիւնների մասին։ Կէլի ապաստանած անկէն ժողովուրդը ենթարկուեց գազանային յարձակումներու։ Շատերը սուրի ենթարկեցին փսխուստ տալ՝ մի մասը դէպի Անտոք, Կեփին և Խրշիկ։ Միւս մասը դէպի Մշոյ դաշտը։ Թուրքաց զօրքերը շարունակեցին հալածել և կոտորել կանանց ու երեխաներին։ Հալածական ժողովուրդը մի քանի տեղ հերոսական դիմադրութիւն ցոյց տուեց, բայց բաւականաչափ ռազմամթերք չունենալով, տեղի տուեց բռնի ուժին։

Ծալորիկը, որտեղ համախմբուած էին 12 գիւղերի բնակիչները և որ պաշարուած էր քիւրդ հրոսակախմբերով, ապրիլի 24-ից սկսած մինչեւ մայիսի 6ը դիմադրեց թշնամուն ամենոյն տոկունութեամբ։ Այդ օրը քրդերը մեծ օգնութիւն ստացան կառավարութիւնից զէնքով ու զօրքով, և այդ պատճառով դիմադրութիւնը դարձաւ անհնարին։ Գիւղը վերցնելով՝ արիւնարբու թշնամիները սոսկալի բռնութիւններ գործեցին և անները ենթարկեցին հրդեհի ու թալանի։

Սասունի 15,000 բնակիչներից հազիւ 1,500 կանայք և երեխաներ են բերուած Մուշ։ Կոտորածների թիւը դեռ ճիշդ յայտնի չէ։ Կուռղ տարրը թագնուած է լեռների մէջ։ Հաւատարիմ իր կոչմանը՝ նա հերոսաբար դիմադրում է թշնամուն և կարելին չափը հսկում է ժողովրդի անկէն մասի պաշտպանութեան վրայ։ Առանձին հմայքով պէտք է յիշատակել Սասունի ժողովրդի տրամադրութիւնը։ Զէնք կրելու ընդունակ բոլոր տարրերը մերինների հետ են և կռւում են անգնահատելի հմտութեամբ ու քաջութեամբ։ Անէ՞ծք սակայն զէնքին, որ պակասում է։

Թիւրք կառավարութիւնը քրդերին է յանձնում հայ գիւղերը աւերելու գործը։ Սասունը վերջնականապէս դատարկելու ծրագրի իրագործումն է այդ, կարգադրուած կենտրոնական կառավարութեան կողմից։

Խմբապետ Անդրանիկ և Սասունի յեղափոխականները սմրացել են լեռների մէջ։ Թիւրքաց զօրքերը շարունակում են իրանց արշաւանքը նրանց դէմ։ Սպասւում է մեծ ընդհարում։

Թաւրիզ, 9/22 մայիսի

Ռուս-թրքական սահմանագլխի քրդերը անհանգիստ տրամադրութեան մէջ են։ Իմացանք հաստատ աղբիւրից, որ սահմանագլխի ռուս պաշտօնեաները գաղտնի միջոցներով գրդռում են քրդերին և թիւրքերին հայերի դէմ։ Սասունի դէպքերի մասին ռուսաց իշխանութիւնները անընդհատ տեղեկութիւններ են ստանում կաշառուած քրդերի միջոցով։

Թաւրիզ, 1 յունիսի
(Հնդա-Եւրոպական գծով)

Մուշից հաղորդում են վրդովեցուցիչ լուրեր կառավարական բռնութիւնների մասին։ Սուլթանի հրամանով՝ տեղական փաշան և վիլայէթական հրամանատարը պատրաստում են կոտորած։ Սասունից եկող լուրերը աւելացնում են կովկասահայերի յուզմունքը։ Լուր կայ, որ սահմանից նոր խմբեր են անցել։ Սահմանագլխի պահակների թիւը աւելացրած է։

Թիֆլիզ, 29 մայիսի
(Թաւրիզի գծով)

Ոստիկանութիւնը շարունակում է դուրս քշել թիւրքահայերին։ Փաստ չկայ, բայց կասկածը օրէցօր զօրեղանում է։ Դէպքեր են եղել, երբ հազիւ մի օր ժամանակ են տուել՝ գործերը կարգադրելու համար։ Հաստատ լուր կայ, որ ռուսաց հիւպատոսները՝ Մարսէյլ, Ալեքսանդրիա, Նիւ-Եօրք եւայլ տեղեր հրաժարւում են վիզէ անել Կովկաս անցնել ցանկացող հայերի անցագիրները։ Աչ-ռուսահպատակ հայերին չեն թոյլ տալիս Ռուսաստան մտնել։ Վիճակը անտանելի է։

Թիֆլիզ, 2 յունիսի
(Հնդա-Եւրոպական գծով)

Ռուս-թրքական սահմանագլուխն են ուղարկուած, Կարսի մօտ մի քանի օֆիցերներ և երկրաչափներ, քաղաքական ծրագիրներով։ Նրանք պատրաստւում են անցնել սահմանը։ Ցարաբերութեան մէջ են քիւրդ և թիւրք ապդեցիկ անձանց հետ։ Սասունի դէպքերը նրանց յատուկ ուշադրութեան նիւթն է։ Կարսի նահանգապետը նոյնպէս գնաց սահմանագլուխ։ Նպատակը անյայտ է։ Ոստիկանութիւնը լուր է տարածում, որ նահանգապետի գընալու նպատակն է ձերբակալել հայ կամաւորներին, որոնք՝ թւով 600, խմբուած են սահմանագծի վրայ։ Դա պատրւակ պէտք է համարել։ Ձերբակալութիւնները խստօրէն շարունակւում են։

Ուրմիա, 3 յունիսի

Ռուս-թրքական սահմանագլխին երեւացել են բաւական էմիսարներ, ուղարկուած թրքաց կառավարութեան կողմից, գաղտնի պրօպագանդի համար։ Լուր եկաւ, որ մի փոքրիկ ընդհարում է տեղի ունեցել թուրք չանբէ զարնեարի և սահմանապահ ռուս զինուորների միջեւ։ Ռուս իշխանութիւնները կալանաւորեցին մի քանի թիւրք պրօպագանդիստներ, որոնցից երկուսը մօլլաներ են։

—⊕⊕—

ՍԱՍՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

(Նոր մանրամասներ)

—⊜—

Սասուն, 17 ապրիլ

Նախորդներով գրած եմ արդէն մարտ 31-ի և ապրիլ 11-ի ճակատամարտներու առթիւ, ինչպէս նաեւ ապրիլ 13-ի ահեղ կռիւի մասին։ Այս օր ալ, խոստմանս համաձայն, աւելի ընդարձակ տեղեկութիւն կուտամ վերջին, այն է 13-ի ճակատամարտի մասին։

Ապրիլ 11-ի կռիւին կը մասնակցէին քրդեր, ձիաւոր ոստիկաններ և զօրքերը։ Ապրիլ 12-ին Բաղէշի կուսակալը իր հետ ունենալով 5 թնդանօթներ և ստւար թիւով զօրքեր՝ ինչպէս նաեւ Մշոյ և Բաղէշի առաջնորդները և երեւելիները, կուգայ Լաճկանցիք։ Օրեր առաջ արդէն լուր տրուած էր, թէ կառավարութիւնը նախ բանակցութեան պիտի մտնէ, բայց կուսակալի մարդիկ կրնան խաբէութեամբ յանկարծակի բերել յեղափոխականները և Սասնոյ ժողովուրդը։ Կուսակալի այս դիտումներուն հաստատութիւն կուտային նաեւ իր հետ բռնի կերպով բերուած անձերը և թնդանօթները։

Ապրիլ 12-ի իրիկուան, ժամը 10-11, կուսակալի կողմէ իբր պատգամաւոր Սէմալ կուգայ Ս. Յովհաննէսի վանահայր Առաքել վարդապետը։ Սա իր հետ կը բերէ պատրիարքին կոնդակը և Մշոյ առաջնորդարանի գրած ապրիլ 10 թւակիր գիր մը, որուն տակ բատորագրած էին Մշոյ և Բաղէշի առաջնորդները, Առաքել վարդապետ և Մշոյ քաղաքական ժողովոյ անդամները։ Այս գրոյն բովանդակութիւնը այն էր, թէ յեղափոխականները անձնատուր ըլլան և ապահով դառնան տեղերնին, իսկ տեղացի ժողովուրդն ալ ամէն կերպով հպատակի կառավարութեան և սպասէ անոր շնորհնեռուն։ հակառակ պարագային՝ կառավարութիւնը խիստ միջոցներու պիտի դիմէ։

Սէմալ կը գտնէին իրենց խմբերով Հրայր և Անդրանիկ, մաս մըն ալ չէնըքցի, ալիանցի, կէլիէկուզանցի և ախպիի իշխաններ։ Ասոնք պատգամաւորին կը պատասխանեն, թէ «անմիջապէս չեն կարող պատասխանել, քանի որ իրենց ընկեր Վահան կը գտնւի Տաղվըներ և մաս մըն ալ իշխաններ ներկայ չեն։ պէտք է բոլորը հաւաքուին տեղ մը գիշերը և

կամ յաջորդ օրը, ժողով մը կազմեն, պատասխանը պատրաստեն և զէնքը ճամբու դնեն»։ Պատգամաւորը կը մնայ։

Անմիջապէս Հրայր, Անդրանիկ և տեղացի իշխաններ ժողով մը գումարելով, կ'որոշեն յաջորդ առաւօտ Գեղաշէնի մէջ ժողով մը կազմել. բայց որովհետեւ իրենց անձնատուութեան պատասխանը մերժողական պիտի ըլլար, կ'որոշեն պատասխանելէ վերջ Ալիանքի, Սէմալի, Գեղաշէնի, Շուշանամերկի, Տաքքի, Իրիցունքի եւայլն գիւղերու ուժերը և ժողովուրդը հաւաքել Կէլի, բոլորը մէկտեղ, և թշնամւոյն գալստեան սպասել։ Այս բոլոր գիւղերը կրակի կը տրուին։ Անդրանիկ գիշերով կը մեկնի դէպի Տաքքը, մաս մը զինուոր կուղարկուին Ալիանցիք և մաս մը ժողովուրդ ալ իրենց գիւղերը։

Գիշերով լուր կը սրւի Վահանին, որ հասնի շուտով Գեղաշէն։ Վահան 13-ի առաւօտ կանուխ կը հասնի Գեղաշէն և տեսնելով որ մարդ չկայ, անմիջապէս լուր կուտայ Սէմալ և Տաքք, որպէս զի շուտով հասնին և՝ մինչ կըսպասէ ընկերներու գալստեան, ահա անոնց տեղը հրացանի ձայներ և օգնութեան կոչեր է որ կը լսուին... Վահան անմիջապէս իր քով եղած մի խումբ զինուորները քանի մը գիւղացիներու հետ կ'ուղարկէ օգնութեան ու ինքն կը բարձրանայ Շուշանամերկի գլուխ և միւս կողմէն ալ լուր կը ղրկէ Անդրանիկին, որ օգնութեան հասնի Սէմալի։ Գեղաշէն գիւղն ալ կը վառուի։

Առաւօտեան ժամը 1-ին, Հրայր՝ Սէմալի մէջ հարկ եղած կարգադրութիւններ ընելէ վերջ, երբ կը պատրաստուէր մեկնիլ Գեղաշէն, կը նշմարէ, որ Թիւրք բանակներ Մերկէմոզանի ճամբով առաջ կուգան։ Մերոնք նախ կը կարծեն, թէ ցոյց մըն է այդ, բայց յետոյ կը համոզուին, որ կատարեալ շարժում մըն է և կը յառաջանան Շէնըքի միջոցով դէպի Սէմալ։ Անմիջապէս կրակ կուտան Սէմալն ու Դաշտակը և խումբ մը յեղափոխականներ ու Ներկայ գտնուող ժողովուրդ երկու մասի կը բաժնուին,— մէկ մասը Սեպուհի և Մուրատի հետ կը բռնեն Բլրիկ, իսկ միւսը՝ Հրայրի առաջնորդութեամբ՝ կը բարձրանան գիւղի վերեւի քարերը և կը պատրաստուին դիմադրութեան։ Կուսակալը իրարու ետեւէ հինգ անգամ թնդանօթներ արձակել կուտայ Սէմալի վրայ և զօրքերը երկու խումբի բաժնուած՝ կ'արշաւեն դէպի Սէմալ։ Թէեւ մեր սղայոց դիրքերը անյարմար էին և իրենց թիւը շատ նուազ թշնամու ահագին բազմութեան ու բանակներուն հանդէպ, բայց որպէս զի Սէմալի ժողովուրդը կարող ըլլայ իր կնիկ ու երեխերը ապահով կերպով անցնել Կէլին, կը ջանան կասեցնել զօրաց ընթացքը։

Երկու կողմէն խիստ հրացանաձգութիւն կ'ըլլայ. Թնդանօթները անգամ մըն ալ կ'որոտան և մեր զինուորներ՝ կռուին սաստկութիւնը եւ դիմադրութեան դժուարութիւնները տեսնելով, ալ չեն ուզեր երկար մնալ եւ —մանաւանդ Սէմալի կանայք ու երախայք ալ արդէն բաւական ապահով ըլլալով— դէպի ետ կը քաշուին, սարի վրայ դիրքեր բռնելու ու կռիւը շարունակելու նպատակով։

Թշնամին անհամար զօրքերը եւ քրդեր(10–12,000), մեր կռուողներր իրարմէ կը բաժնեն։ Սարերը ձիւն, դիրքը անյարմար, բայց մեր կտրիճները առանց վայրկեան մը կորսնցնելու, պաշարիւնութեամբ կը շարունակեն կռիւը զանազան կողմերու վրայ։ Կռիւը կ'երկարի Մխիթարայ խորէն մինչեւ Ալիանցոց գլուխ։ Անձրեւի պէս կը տեղայ գնդակները եւ թնդանօթները անընդհատ կ'որոտան։ Գլուխն գնդակի հարուած մը ընդունելով՝ Զայի մէջ կը նահատակուի մեր անփոխարինելի ընկերը՝ Յեղափոխութեան անվհատ Առաքեալ՝ ՀՐԱՅՐ (Արմենակ Ղազարեան—Դժոխք)։ Անկից քիչ մը վերջ կը նահատակուի Սէմալցի ԿՐՊՕՆ. զինուոր ՄԱՐՏՕՆ ալ ոտքէն վիրաւորուած՝ կը մնայ իր տեղը։

Կռուողներէն մաս մը Զայի ճամբով կ'ելնեն Կէլի կողերը, որոնց ետեւէ կը խուժէ նաեւ զօրքն ալ։ Մինչեւ այս կէտը՝ պատերազմը մեզ համար աննպաստ կը դառնայ։ Բայց երբ չորս կողմէն, Անդրանիկ իր խմբով եւ ուրիշ խմբապետներ կը հասնին օգնութեան, մեր կռուողները նոր ուժ առնելով՝ թշնամիին կողմերը կը զարնեն եւ աւելի կատաղօրէն կը յարձակին զօրքերի վրայ։ Խուճապ մը կ'իյնայ զօրաց եւ քրդաց մէջ. կը սկսին փախչիլ դէպի ետ։ Մաս մը զինուորներ կը մնան հովտի մէջ եւ անխնայ կը կոտորուին։ Միւսներ ցիր ու ցան կ'սկսին փախչիլ, հայեր կը խուժեն անոնց ետեւէն, կը վռնդեն դէպի Զայր, բայց անկից ալ վար՝ դէպի Շէնըքի եւ Սէմալի աւերակները։ Իրիկուան ժամը 12-ի ատենը՝ կռիւը կը վերջանայ։ Մեզմէ նահատակուած են, բացի ՀՐԱՅՐԷՆ եւ զինուոր ՄԱՐՏՕԷՆ. ժողովուրդէն եւս 7-8 անձեր քանի մըն ալ վիրաւորեալ ունինք։ Թշնամիէն ընկած են շատ, լոկ պատերազմի դաշտի վրայ թողած են 30-է աւելի դիակներ եւ հետերնին առած են ալ աւելի։ Կորուստ ունինք մէկ մօսինի եւ երկու պերտանկայ. իսկ թշնամիէն բերինք 18 մավզէր, իրենց փամփուշտներով։

Ապրիլ 14-ին թշնամին նոր զօրքեր բերել տուաւ Մուշէն. Ապրիլ 15-ին 200-է աւելի զօրքեր ու քրդեր արշաւանք գործեցին Կէլիէկուզանի ճիւղ եղող Մէրկէր գիւղը, սակայն վայրկեանի մը մէջ ցիր ու ցան ըրինք. Իշխանձորն ալ վառուեցաւ եւ գեղը պարպուեցաւ. Տիարբէքիրէն զօրքեր եկան եւ բանակ դրին հոն. կըսպասեն Տալւորիկի վրայ արշաւել։

Ապրիլ 16-ը անձրեւոտ ըլլալով խաղաղ անցաւ. Ապրիլ 17-ն ալ խաղաղ անցաւ, միայն թէ նոր բանակներ հասան Մուշէն. Բանակը կը թանձրանայ. Նոր եւ մեծ արշաւանք մը սպասուելու է.

ՎԱՀԱՆ

(«Դրօշակ»)

ԶԻՆԱԿԻՐ ԽՄԲԻ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ

Վան, 25 ապրիլ

... Ապրիլ 17ին, գեղեցիկ ձիերու մէջքին թամբ վեց ընկերներով, ու արիւնով ողողուած Նիւրական հայրենիքի լեռներ ու հովիտներ տեսնելու բուռն տենչով քշեցինք դէպի սահման։ Ըստ երեւոյթին, թշնամին մեզ լրտեսել էր սկզբից իսկ, որովհետեւ հազիւ մի քանի ժամ անցած՝ քրդեր նշմարեցինք։

Առաւօտեան անձրեւ սկսեց եւ հետեւեալ գիշերը մեր ձիերի ոտքերի հետքերը ձգեցան լանջերի ու հովտների մէջ. Նախորդ գիշերուայ քրդերը հաւար էին տարած եղել գիւղերը եւ ահա մեր ճանապարհին երեւացին վեց զինուած քրդեր, որոնք ուղղակի գալիս էին դէպի մեզ։ Հեռուից ձայն տուինք եւ զուրս եկաւ որ մեր ծանօթ քրդերն են։ Նրանք լսել էին, թէ աւազակներ են անցել եւ այդ պատճառով մեզնով հետաքրքրւել էին։ «Եթէ գիտենայինք, որ դուք էք՝ սէր կը գայինք» յայտնեցին նրանք։ Եւ դրա հետ միասին խորհուրդ տուեցին մեզ՝ առաջ չը գնալ, ասելով, թէ շատ քրդեր արդէն մեր առաջը կտրել են։

Սակայն ո՞վ յետ կը դառնար։ Որոշել էինք, ինչ էլ լինի, առաջ գնալ։ Եւ ծանօթ քրդերի «բարի երթով» ճանապարհ ելանք։ Այդ գիշերը հատ հատ ձիաւոր քրդերի միայն պատահեցինք. մի քանի գնդակներ փոխանակեցինք միմեանց հետ, ու նրանք անհետացան շուտով։

Մեր ճանապարհը անցնում էր մի գիւղի վերեւից։ Գիւղի պահապաններ նկատեցին մեզ. հաւար ընկաւ եւ ճանճիլի նման թափեցին։ Նրանց մէջ կային եւ զինուորներ, որոնցից մէկը յանդգնութեամբ հասաւ մեր խմբապետին եւ բռնեց ձիու սանձը։ Խմբապետի հաշտարար խօսքերն ու խորհուրդները զուր անցան. զինուորը պոկ չէր գալիս. իսկ ահագին խուժանը հասնում էր մեզ արդէն եւ սպառնում։ Խմբապետը համբերութիւնն ու յոյսը կորած՝ հրացանի խողովակը ուղղեց զինուորի կրծքին եւ արձակեց. զինուորը գլորվեց (վերջը իմացանք, որ հարիւրապետ է եղել). մենք առանց անցանք։

Արշալոյսին մեզ ձգեցինք Լիմ գիւղի վերեւի սարը։ Թշնամին հետեւում էր մեզ։ Հաւարը փրթել էր ամէն կողմ։ «Դէ՛, ողիրք ջան գործ բացւեցէ» ասաց խմբապետը ժպտալով. «Դէ՛, քեզ մատաղ, մօսին ջան», բացականչում էին ընկերներս ու գրգում հրացանի խողովակները։

Մենք պաշարուած էինք չորս կողմից 2-3 հարիւր քիւրտերով եւ 35-40 ձիաւորներով։ Իջանք մեր ձիերից, յանձնեցինք ընկերներից մէկին, որը նրանց տարաւ ձոր, եւ դիրքեր բռնեցինք։ Հեռադիտակով թշնամու շարժումները դիտելով։ Արեւը բարձրացաւ։ Յափշտակւած գեղեցիկ լեռների տեսքով, ազատութեան երգեր էինք մրմնջում... իսկ սրտերիս մէջ վրէժն ու զայրոյթը պայթել էր ուզում։

Վերջապէս հովիւները նկատեցին մեր ձիերը։ Քրդական հաւարը սկսւեց արձակւած մի քանի գնդակների հետ։ Թողինք որ մօտենան։ Ձիաւորները սրարշաւ գալիս էին, բայց երբ մեր գնդակները գլորեցին մի քանիսին՝ ստիպւեցին կանգնել։ Նրանք էլ դիրքեր գրաւեցին։ Եւ որքա՜ն տարբերութիւն թէ՛։ Մեզանից իւրաքանչիւրին 40-50 հոգի էր ընկնում եւ մարթինիի ու բէրդանի գնդակները վժժում էին մեր չորս բոլորը։ Մենք գնդակ չէինք արձակում՝ զուր տեղ, պահելով այդ վճռական րոպէին, քանի որ թշնամիները շարունակ առաջ էին նետւում յիմարաբար։

Ազատելու յոյսը քիչ կար «Սիրտերդ պինդ պահեցէք. փամփուշտ շատ կայ, կեցցէ Դաշնակցութիւն», գոչեց ընկերներից մէկը։ Եւ նոր կատաղութեամբ գոռացին մեր մօսինները։ Ապահովաբար մեր ձիերը վտանգի մէջ էին այժմ։ Թշնամին աշխատում էր գրաւել նրանց. մենք դժուար դրութեան մէջ էինք—ձիերին պաշտպանէինք թէ՞ մեզ։

Մեր ձիապան ընկերը արդէն սանձերը թեւերին անցրած՝ աջ ու ձախ գնդակներ էր արձակում. Անում էր մի վճռական քայլ անել։ Մեզանից մի քանիսը նետւեցին դէպի բռները եւ գնդակների տարափի տակ ինչ կարելի էր բարձրացրին դէպի մեր դիրքը։ Ձիերից մէկը խոյանեց ու անցաւ թշնամու ձեռքը. մեր ձիապան ընկերն էլ հասաւ մեզ։ Այդ ժամանակ ձիերը փոխանակ թշնամուն թողնելու, լաւ համարեցինք մեր ձեռքով սպանել, ու այդպէս էլ արինք։

Այդ միջոցին մեր ընկեր վանեցի Յովհաննէսը, ստացած՝ դուրս նետւեց դիրքից եւ ճակատ առ ճակատ կանգնեց թշնամու դիմաց։ Շատ չանցած՝ քաջը թշնամու գնդակին զոհ գնաց։ Մենք համբուրեցինք մեր թանկագին ընկերոջ արիւնլուայ գլուխը՝ առինք հրացանն ու փամփուշտները և մարմինը պատսպարելով քարերի մէջ, նետւեցինք թշնամու շղթայի վրայ յաջողութեամբ, ճեղքեցինք ու անհետացանք։ Մի քանի ժամ վերջ Վանից հարիւր աւել զինւոր էին հասել, բայց և հետքը արդէն կորած էր...

Սարսափը ահագին է. թշնամին տրամադիր է կարծել, որ մենք 100-150 հոգի ենք եղել։

Այժմ բոլորս ապահով մեր սիրած տեղը, ընկերների մօտ ենք.

Հ.

«Դրօշակ»

ԻՍԿ ՋՐՊԱՐՏԻԶՆԵՐԸ՞Ն ՈՒ՞Վ ՊԻՏԻ Է ՊԱՏԺԷ

«Դրօշակ»ի յունիսի համարում հրատարակված է Հ. Յ. Դաշնակցութեան Պալքանեան շրջանի պատգամաւորական ժողովի մի յայտարարութիւնը տրված Դաշնակցութեան ձեռնհաս մարմինների որոշումների հիման վրա։

Այդ յայտարարութեան մէջ որոշված են Բուրգասի 28 սեպտ. կի գործողութեան խնդրի մէջ մեղադրվածները՝ Կարապետ Մարտիրոսեան, Ս. Ա. և Մաքսուդ Պալիկեան։

Բացի այդ նոյն այդ յայտարարութիւնից յայտնվում է թէ յետ տարիներ առաջ զէնքերի մի մասը ետ է խլված, իսկ միւս մասի համար էլ Ս. Ա.ից հազար ֆրանկ է առնված։

Պատգամաւորական ժողովն իր՝ լրբօրէն կրպարուված ընկեր Վարդօի և ուրիշների համար հետեւեալ կտուն է կցում այդ յայտարարութեան.

«Մը յայտարարենք որ մեր ընկեր Վարդօ և ուրիշներ ոեւէ մասնակցութիւն չեն ունեցած այդ սպառու գործին մէջ»։

Լաւ, է՞յ դու հայամբոխ, դու որ մտիկ էիր անում Գարպէն օդլուի նման սոսր տիպերին և տրամադրվում՝ ցեխ տեսնել այն տեղ, ուր երբէք չէ կարող լինել

հիմա կարող ե՞ս սպասիր տալ այն ցաւագնոգի զրպարտիչներին, որոնք վ. սրդօներին ցեխոտել էին ճգնում միայն իրենց լրբութեանը յագուրդ տալու համար...

ՄՈՒԹԷՆ ԴՈՒՐՍ ԹՈՂ ԳԱՆ

Շատ հոգիներ կան գերազանցապէս գիւային և նոյնքան ալ վաս, որոնք ո՛չ մի սրբութիւն չեն ճանչնար չիտակութիւնն ինչ է չգիտեն, միայն կը գրպարտեն ու կը մրոտեն վատաբար մուրթին մէջ և դիմակի տակ։ Այդ մարդիկ իրենց բաներին ու բրածին հաւար բնաւ խիղճ, խղճմտանք չունին. ամէն բան կ'ընեն, բաւական է որ զիրենք անհանգստացնող փորի ցաւեր, կարդաղրելու մութ հաշիներ ունենան։

Հանդայի փողոցին մէջ երեք կէտերու տակ կծկուած ճկճիմ արարած մը լրճակութեան գլուխ գործող մը զտեղած է և այդ աղտոտութեան մէջ կրօնին ալ ներփողեան մը հիւսած է արտաքոյ և ծիծաղելի, որուն այնքան պէտք ունէր չիտակը։

Փալասին անորակելի դիմակաւորը Հայկ Եարտրմեանի զրկուած սպառնական և անստորագիր նամակը ասիթ բռնելով կ'անճրկի իմ անունս մրոտելու այնպիսի լպիրշ մոլեգնութեամբ մը, որով կը յայտնուի թէ իմ կոյութիւնս այդ մարդուկին վրայ շատ ծանր կը ճնշէ, իմ գործս ասնոր մութ նպատակներուն մեծապէս արգելք կը հանդիսանայ։ Գիտեմ և բնաւ չեմ զարմանար իմէ ինչու թունոտ փրփուրներ կը ժայթքեն իմ դէմ։ Արհամարանքով կը նայիմ ու կը խղճամ այդ անզօր կարողութեան վրայ, և եթէ նպատակ չունենայի մութին մէջ գալարուող վատերու օձիքէն բռնելով լոյսին բերել, աս յօդուածը գրելու ձանձրոյթը յանձն չէի առներ։

Կը խնդրեմ բոլոր բարեկամներս որ բնաւ չզրգռուին, այլ կատարելապէս անտարբեր ու արհամարոտ մնան, ինչպէս որ եղած են մինչեւ հիմա անցած դարձածին։ Թիլիսէի Դաշնակցականներու փէշերը կը քաշեն, զրգռել կ'ուզեն, մեր վարժարանի շուրջն ալ կոիւներ հանել կաշխատին, որպէս զի հրապարակը խաւնակեն, մտքերը պղտորեն, ատելութիւններ սերմանեն։ Զգուշութիւն, հաշիւ ունին, պղտոր ջուրի մէջ ձուկ որսալ կուզեն։ Անձնական, դպրոցական ու թաղային կռիւները կուսակցականի վերածելու ճիգերը չկոստոփանուած՝ բայց յայտնի նպատակներու կը ձգտին։ Մենք ո՛չ իրաւունք ունինք և ո՛չ ալ պէտք է որ այդ տեսակ կռիւներու կուսակցական զոյն տանք։ Թողէ՛ք իրենք իրենց իյնան. թողէ՛ք մարդիկ իրենց իսկական գոյներով իրենք իրենց ճանչցուին։ Ուժի միջոցաւ յայտնուած ճշմարտութիւններ շատ համոզիչ, և բռնի եղած փոփոխութիւններ հիմնաւոր չեն ըլլար, անոնք տեւական և ողբալի հակառակութիւններ միայն կը ծնին։ Կուսակցամոլութեամբ կուրացած մտքեր, սուտերով սնուած ուղեղներ արդէն չատ ունինք մեզ դէմ նախապաշարուած։

Փալասին դիմակաւորը իր ամբողջ մախանքը, կուտակած ամբողջ թոյնն ու լեղին իմ վրայ թափել կարենալու համար. զիս Շարժումի թղթակիցը կ'ենթադրէ և Եարտրմեանի զրկուած նամակին ալ հեղինակ կը հռչակէ անամօթաբար։ Զիս անուանարկելու համար ստեղծուած սուիրը կեղծ եւ յենակետն ալ սուտ է։ Եարտրմեանի նամակով կրկսի և իրենց փորի ցաւը կուլայ, զիս թղթակից կ'ենթադրէ և լրճուկ մեղադրանքներ միայն կը բարդէ վրաս։ Անհերեսութեամբ և նպատակաւոր կերպով յերիւրուած այդ սուտերը հերքել մտքէս անգամ չեմ անցներ, անոնք այնքան վարէն կուգան և չեն կրնար զիս արատաւորել։ Իմ նպատակս վատերը մէջտեղ հանել, անոնց երեսի կաշին կարմրելու չափը հասկնալն է։ Ներկայ գրութեանս հրատարակումի թուականէն մինչեւ հինգ օր պայմանաժամ փալասի անանուն դիմակաւորին. թող մութէն դուրս գայ, թող դէմքը ցոյց տայ և եթէ իր ազատ զրպարտութիւններուն մէջ մազի չափ ճշմարտութիւն կայ, թող ընկերական ատեանի մը առջեւ հաստատէ։ Պայմանաժամը լրանալուն ես պիտի կարենամ երեւան հանել կէտերու տակ պահուած անանունը որ համարձակեցաւ մութին մէջէն իմ անունիս ազատ շպրտել։

Ամբաստանութիւնը ուղղակի եղած է և բաւական ծանր է, ոճրագործական հանգամանք ունի։ Արդարութեան ձեռքէն չկրնար փախչիլ փալասի դիմակաւորը և թերեւս դիւրութիւն տայ ինձ Եարտրմեանի և Գալճեանի եւս օձիկէն բռնելու, որոնց մին խանութներու մէջ և միւսը թերթի միջոցաւ նոյն զրպարտութիւնները ըրած էր անորոշ կերպով։

Համբերութիւնս երկար է, քիչ մըն ալ կ'ըսպասեմ։

Կ. Պիսնեան

18 Յունիս 1904

Թիլիսի

Ծանօթ. — Նախորդ բոստով ուղարկած նամակս կորսուած է, այս յօդուածիս երկրորդ օրինակն է։

Նոյն

ՎԵՐՋԱՊԷՍ ՊՐՆ. ՊԻՍՆԵԱՆ

—)o(—

Պարոն Կ. Պիսնեան, վերջապէս մէջ տեղ ելաք, թէպէտ հարկ ալ չէր, քանզի թղթակցին բսածները կը կրկնէք քիչ մը տարբեր բառերով։

Բնական էր կասկածիլ եւ փնտռել սպառնական նամակներուն հեղինակը չորս հինգ տարիէ ի վեր մեզ հալածող հակառակորդներուն մէջ, որ երբէք առիթը չը փախցուցին Հայկազեան կրթարանի դէմ գրելու ատէն գնով։ Մեծ եղաւ զարմանքը երբ տեսուեցաւ թէ դուք ալ ազատ Պուլկարիոյ մէջ առանց կանխաւ ըսպառնալու՝ «հարկ եղած ատեն, (անշուշտ ըստ ձեզ) ճակատին կը զարնէք, երեսին կը թքնէք»։ Նոյնը ընել կուզէ անստորագիր նամակներուն դրդիչը կամ հեղինակը, միայն

«ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳԱՂԱՓԱՐԸ»

(Հեղինակ Միքայել Վարանդեան. տպագրութիւն Հ. Ց. Դաշնակ.)

Շրջան մը կը բոլորենք, ուր ամէն հայ անհատի միտքն ու սիրտը անհրաժեշտաբար ուղղորուած է հայրենիքի գաղափարով։ Թափառումի ու կարօտի տուայտանքը աւելի կը սիրցնեն զայն, զրկանքն ու թշուառութիւնը, հին, մանկական ու պատմական յիշատակներու վերազարթնումը զայն կը նուիրագործեն։ Բայց միեւնոյն ատեն որքա՜ն թիւր ըմբռնումներ, որքա՜ն չիր ու միակողմանի տեսութիւններ, որ կը յերիւրուին անոր շուրջը, սպառնալով պղտորել վճիտութիւնը գաղափարին եւ սրբութիւնն զգայուցին։ Հայրենիքի հսմզուած մշակներու պարտքն է ցրուել այդ հորինզուող ամպերը, որպէսզի պայծառութիւնը չի խանգարեն եւ ուժեղութիւնը փրկեն։

Այս ճիգն է զոր Պ. Վարանդեան կրստանձնէ իր գրքոյկով եւ կը ջանայ «գէթ մասամբ» պարզել թիւրիմացութիւններն անոնց, որոնք «հայ ազգային–քաղաքական դատին հաղէպ բացասական դիրք կը բռնեն ու կը մերժեն Ռուսահայոց մասնակցութիւնը թրքահայ շարժման, չնականօրէն աղաղակելով. Կովկասահայերը չեն կարող մասնակցիլ մի դատի, ուր իրենք չան չունին»։ Պ. Վարանդեան կը թուի յանգիլ այն եզրակացութեան թէ՝ իրերու ներկայ դրութեան մէջ, քանի որ իրր ուրոյն ազգ գոյութիւն ունինք, եւ քանի որ մարդկութիւնը անջատական սկզբունքներու կը հետեւի դեռ, անխուսափելիօրէն պիտի յաւերժաշնենք մեր թշուառութիւնը «ապազգայնութեան» յարելով, մինչեւ կատարեալ ձուլման հասնելնիս։ Հետեւաբար, նոյնիսկ մեր դրական, շօշափելի շահը կը պահանջէ հայրենիքի գաղափարին ամենաջերմ պաշտպանը կանգնիլ, գոնէ փոխանցման շրջանի մը համար, մինչեւ որ լաւագոյն օրերը գան աշխարհներու լաւագոյնին մէջ։

Այս տեսակետէն մեկնելով Պ. Վարանդեան կը ձգտի նախ «ազգերու ծագումը» բացատրել. «Ազգութեան էական պայմաններէն» որոշել, վերջէն հակադրելու համար ներկայ դարու ընկերական աշխարհի մէջ տիրող երկու տարբեր ուղղութիւնները. ազգայնութիւն եւ ընկերվարութիւնը։ Այս վերջին վարդապետութեան հեռահետ կրած բնաշրջման փուլերը համառօտակի պարզելէ ետեւը, կը հասնի անոր ամենէն հեղինակաւոր ձայներուն վերջին խօսքին, որ «Ազգերու ինքնավարութիւնը» իբր բանաւորագոյն լուծումը կը զտնէ ազգայնական խնդրին։ Վերջին մասին մէջ. պ. Վարանդեան «Հայկական կռիւ»ին տեղը կորոշէ ընկերվարութեան մէջ, բացատրելով որ Հ. Ց. Դաշնակցութիւնը առանց շեղելու իր «կեդրոնական մրտահոգութենէն, որ ազգային պաշտպանութեան գործն է, իր գործոն աջակցութիւնը կը բերէ ընկերվարական Նորաբողբոջ շարժման»։

* * *

Ազգերու ծագումը, ինչպէս բոլոր «ծագումներու» հարցը գիտական անլուծելի կնճիռներէն մին է։ Երբ, մարդկային քաղաքակրթական պատմութեան չուրջը յածելով, ականատես կը լլլանք, դարերու ընթացքին մէջ, ազգերու սարսափելի նահատակութեանց ուրիշ ազգերու ձեռքով՝ յանուն «հայրենասիրութեան» գաղափարին. երբ կը տեսնենք միւս կողմէն, ժամանակին հեռադիտակին մէջէն, այն անընկճելի ուժը որ դուրս կը ցցուի հակառակ գործուած անդարմանելի աւերումներուն, որ, իսկոյն, զգլխիչ արագութեամբ կը վերակենդանացնէ ազգութիւնը, ակամայ կը խորհարհինք անոր առջեւ, հիացումի եւ զարմանքի խոր զգացումով առլցուն։

Գոյութեան կռիւը ազգերու կազմութեան ալ հիմը եղած է. աններպաստ պայմաններու մէջ մնացած մարդկային համայնքները գոյութեան պահպանումի բնազդէն մղուած՝ իրենց համար աւելի յարմար միջավայրներ փնտռած են, եւ հանդիպելով նպաստաւոր պայմաններ արդէն վայելող տարբեր համայնքներու, դարերով պատերազմ մղած են անոնց դէմ։ Պատերազմիկ կամ խաղաղ յարաբերութեանց մտտական այն պահմանումը արիւնի ազգակցութիւն յառաջ բերած է, որ «ժառանգականութեամբ հետզհետէ ամրացած, նման սովորութիւններ, աւանդութիւններ, կրօնք, լեզու ստեղծած է»։ Այսպէս դրուած է ազգութեանց առաջին քարը, եւ ասանկ կը բացատրուին նաեւ այն արիւնոտ էջերը որոնք մարդկային պատմութիւնը կը լեցնեն սարսափով։ Գոյութեան կռիւը թոյլ չէ տուած ազգերու խաղաղ պայմանաւորումին, եւ անշուշտ դեռ երկար դարեր պիտի թոյլ չի տայ։

Ի՞նչպէս որոշել, սակայն, ազգութեան մը էական պայմանները։ Ի՞նչպէս ընդունիլ թէ. նախկին դարերու մէջ կազմուած ազգութեանց զանազանութիւնը անհրաժեշտօրէն մինչեւ վերջը պիտի մնայ։ Ահա երկու հարցեր՝ որոնց առաջինին պատասխանը Պ. Վարանդեան երկարօրէն կուտայ, բայց երկրորդինը՝ ոչ։

Ծագումի նոյնութիւն, ֆիզիքական ու հոգեկան նմանութիւններ, հայրենիքի, լեզուի, կրօնքի, յիշատակներու նոյնութիւն. ահա գործօններ որոնք ազգութիւնը կը բացատրեն, բայց որոնց ոչ մէկը ազգութեան անհրաժեշտ պայմանը կը նկատուի, քանի որ կան ազգութիւններ տարբեր լեզուներէ, տարբեր կրօնքէ, տարբեր սովորութիւններէ կազմուած։ Գաղտնիք մըն է ասիկա, զոր կըզգանք, կապրինք, բայց չենք կրնար վերլուծել, սահմանել։ Մարդ կրնայ ամենէն խորունկ Հայն ըլլալ առանց Հայաստանի երեսը տեսած ըլլալու, ինչպէս հիանալի Հ. Ալիշանը, առանց հայերէն լեզուն գիտնալու, ինչպէս էր երբեմն Գրիգոր Արծրունի։ Ճշմարիտ սկզբունքը ազգութեան պէտք է կամքերու ներդաշնակութեան եւ զգացումներու հաւասնմանութեան մէջ փնտռել։ «Միասին տառապիլ եւ միասին վայելելը ազգային միութեան ամենէն աւելի կը նպաստէ, կը գրէ Ռենան, որովհետեւ տառապանքը մանաւանդ աւելի կը կապէ մարդիկը իրարու, քան թէ վայելքը։ Ազգային յիշատակներու համար, սուգերը աւելի արժէք ունին քան յաղթանակները, որովհետեւ անոնք պարտքեր կը դնեն վրանիս եւ հաւաքական ճիգի կը մղեն գ՛մեզ»։

Ծ.

(Շարունակելի)

թէ ձեզմէ ասով կը տարբերի, զուցէ ազնուաբար(°.°.°.). որ առաջէն լուր կուտայ իր ընելիքը կամ չընելիքը։ Սակայն երկրին օրէնք ձեր երկուքին ալ վրայ արդարութեան միեւնոյն աչքով կը նայի. եւ անոր դիմելու առ այժմ նպատակ չունինք վստահելով հայ արդարասէր անհատներու ի Փիլիպէ, որ հայ պատուոյն նախանձախնդիր ըլլալով պիտի գըտնեն յիշեալ սպառնականին բուն հեղինակը։ Բայց պարոն Պիօնեան, զուք «ստոր արարած» կը կոչէք անստորագիր նամակին հեղինակը. իսկ զուք կը խոստովանիք որ առանց սպառնալիք ընելու ալ կարող էք զարնելու. ասալ ձեր սպառնալիքն է. նա խօսող է ըսել կուզէք. իսկ զուք գործող. Ստորնութիւնը «զարնելու» չափ, «թքնելու» չափ կիրք ունենալուն մէջ է: Ըսէք խնդրեմ ի՞նչ հարկ կար ձեր զարնելու, թքքնելու կարողութիւնը մէջ բերելու. ի դիմաց որո՞ւ կը խօսիք. «ձեր դէմիններըո կըսէք ու չիտակ լուր կուտաք. քանզի մեր «դէմիններն» են, «Թղթակից Ապրօ (լուսահոգի), «Երուանդ» եւ զուք, «Կ. Պիօնեան»։ Այս խումբն է հալածողը. Այս խումբն է ատելութեան սերմնացանը։ Առաջի սպառնականը «Երուանդ»ի յօդուածէն տոգորուած ըլլալով կը գրէր եւ այդպէս ալ կըսէր: Սպառնական նամակներ գրողը իր բրածին համար, իսկ ձեր խմբակը այդպիսի «ստոր արարածներ» պատրաստելուդ եւ ձեր յօդուածներով օր ու քէն արծարծելնուդ համար Հայ իրաւունքին ու մարդկութեան առաջ յարոյցիկ պատասխանատու կը մնաք։ Ո՞ւր կը գտնուիք, ո՞ւր կերթաք եւ որոնց համար կապրիք։

Զը մոռնամ ըսել պրն. Պիօնեան որ իմ ուսուցիչս ինձի մատնել մի փորձէք. նա կատարեալ մարդ է եւ գիտէ թէ ի՞նչ կը խօսի եւ ի՞նչ կընէ։ Ստիպուեցէք գիտնալու այլ եւս որ, ամէն անհատ ու ամէն վարժարան իւր իսկ արժանիքով կապրի։ Պարապ տեղ վարկաբեկումի հետամուտ մի ըլլաք։ Հոգին՝ որուն գոյութիւնը ուրախ եմ որ կը խոստովանիք, վարկաբեկումի ճիգէն ինքնասպան կըլլայ։ Սակայն մեր վերջինը ձեզի այս է. լռե՛լ ձեզ եւ համախոհներուդ հանդէպ։(*)

Հ. Ե. Եարտրմեան

Փիլիպէ
16 յունիս 1904

Ծ. Խ.—Այս անգամ տպագրելով երկու յօդուածներն էլ՝ վերջ ենք տալիս այս վիճաբանութեան, միանգամայն յայտարարելով որ պ. Պիօնեան «Շարժումի» թղթակիցը չէ. եւ նա «Շարժումին գրում է միշտ իր իսկական անունով։

Իսկ գալով պարոն Եսրտրմեանի ուսուցչութեան եւ իր դպրոցին, մենք էլ այն կարծիքին ենք, որ այդ դպրոցը եւ դպրոցի վարիչը բոլորովին անհամապատասխան են ներկայ մանկավարժական պահանջներին. Ինչպէս կաթոլիկ պապերը, այնպէս էլ բողոքական պաստառները անկարող են ներկայ պահանջներին յարմար կրթութիւն տալ։ Բայց կան ողորմելի հայեր որոնք միշտ յիմարութիւնը ունեն օտարներից հալածական անպէտքներին յարգել։

ԼՕՆՏՕՆԻ ԴՕՆՖԷՐԱՆՍԸ Ի ՆՊԱՍՏ ՀԱՅԵՐՈՒ ԵՒ ՄԱԿԵԴՈՆԱՑԻՆԵՐՈՒ

—o—

Յունիս 16ին Լօնտօնի Ուէսթ-մինստր Պալատին մէջ տեղի ունեցեր է համագումարումը Հայաստանի և Մակեդոնիոյ. որուն Փրանսայէն ներկայ եղեր են Պր. Էր Քիար, Բրէսանսէ, Տրնի Կոշէն, Անագօլ Ֆրանս, տ'Էքտորնէլ տը Քոնսթան և ուրիշներ. իսկ Անգլիէն բոլոր ազատասէրները և մարդկութեան բարեկամները։

Ֆրանսայի և Անգլիոյ հանրայնին կարծիքին ներկայացուցիչները գլխաւորապէս հաւաքուած էին Հայաստանի և Մակեդոնիոյ ճակատագրով զբաղելու։ Ատենախօսները կարճ խօսեր են. բայց ամենասարսափելի դոյներով նկարագրեր են Հայաստանի կացութիւնը որ այժմս իր արեան մէջ կը լողայ, շնորհիւ Թուրքերու և քուրտերու, ինչպէս և Մակեդոնիոյ կացութիւնը, ուր բացի Թուրքերուն հասցուցած չարիքներէն, այսօր սովը կսպառնայ։

Ատենախօսներուն տեղեկագիրներէն և ճառերէն յետոյ, որոշում մը տրուեր է, որուն մէջ շեշտելով Հայաստանի և Մակեդոնիոյ սպառնական կացութիւնը կոչում կընեն Եւրոպայի մարդասէր կառավարութիւններուն, ու կը խնդրեն ամենաեռանդուն կերպով միջամտել ի նպաստ գերի ժողովուրդներուն, որոնք հեղհեղեալ Թուրքին դանակէն ու հրացանէն կը նեղին։ Ոչ կընեն սպատել զանոնք այն լուծէն, որ այսօր կը խեղդէ զիրենք։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Պոլսէն յունիս 20 Վիէննա կը հեռագրեն թէ Աւստրիոյ և Ռուսիոյ դեսպանները ելեւմտական ծրագիր մը կազմած են Մակեդոնիոյ համար որ և պիտի ներկայացուի Բարձրագոյն Դրան։

— „Պերլինէր. Թագըլ.“ թերթը կիմանայ թէ Պոլսոյ մէջ հընչակեանները կարմիր գոյնով յայտարարութիւններ ցրուած են դեսպաններուն, սպառնալով որ դաւադրական գործողութիւնները պիտի սկսին, եթէ Հայաստանի կացութիւնը չը բարւոքուի։

Դիտ. Խ. Ինչպէս կերեւի այս չուալթանութիւն մըն է. ինքզինքին գործի մը վրայ ցուցնելու։ Ու կարծես այդ տեսակ յայտարարութիւնով մը կը հասկցնեն թէ մինչեւ օրս Հայաստանի հայութիւնը շատ աղէկ էր և ատոր համար ալ չէին գործեր։ Թո՞ւ...

— Սելանիքէն յունիս 19ին Վիէննա կը հաղորդեն թէ Բէթրիզի, Շթիբի, Ութրումիցայի, Բրիլէբի, Մօրի, Խօվոյի և Օխրիտի լեռներուն մէջ կրկին Պուլկար հրոսախմբեր երեւցեր են։ Եէնիճէի լեռներուն մէջ 150ի չափ հայդուկներ ժողով գումարած են։

— 19 յունիի Պոլսէն Վիէննա կը հեռագրեն թէ Սուլթանը հրամայած է դեռ ոչ-թիֆիները չարձակել, որովհետեւ Մակեդոնիոյ մէջ նոր հրոսախմբեր երեւցեր են։

—Բոլ. Զայիմունկ կը տեղեկանայ թէ Սիսկիբի և ուրիշ մէկ երկու տեղերու մէջ թուրք զինուորները հեռագրատուն գրաւելով՝ ուղղակի Սուլթանին հեռագրեր են որ, իսկոյն զիրենք արձակէ։ Նոր զօրքեր դրկուած են անհնազանդներու դէմ. կարգը վերահաստատելու համար։

—Սերպ սահմանագլխէն կը հեռագրեն թէ Ալպանացիք յարձակած են Գլինովաց գիւղին վրայ և բազմաթիւ տուներ թալած, սերպ սահմանապահ զօրքերուն վրայ կրակ ընելէ ետքը։ Ոչ է սպաննուած չիկայ։

ՌՈՒՍԻԱ

Հէլսինկֆորսէն յունիս 20ին Վիէննա կը հեռագրեն թէ Բոբրիկովի սպաննութենէն վերջը ձերբակալուած են 42 հոգի, որովհետեւ ոստիկանութիւնը դաւադրութեան հետքեր գտեր է։ Ձերբակալուածները բոլորն ալ ազգական դասակարգէ են, ուսանողներ, փաստաբաններ և պաշտօնեաներ։

Խուզարկութիւնները դեռ կը շարունակուին։ Բազմաթիւ կոչեր գտնուած են։

Հէլսինկֆորսէն Շվէցիա կը հաղորդեն, որ Շաումանի հայրը հարցաքննիչ դատաւորի մօտ կանչուեր է և ձերբակալուեր է։

— Բեթերսպուրկի մէջ կը խօսուի թէ Ֆինլանտիոյ նահանգապետ պիտի նշանակուի Խարքովի նահանգապետ իշխան Օբոլէնսքի։

ՖՐԱՆՍԱ

Նախկին նախարարապետ Վալտէք Ռուսսօ յուսահատելով որ չը պիտի բժշկուի, փորձած է ինքզինքը սպաննել. սակայն կինը ժամանակին վրայ հասնելով ատրճանակը խլած և արգելք հանդիսացած է։

— Բարիզի մէջ լուր կը պտտի թէ նախկին պատերազմական նախարար Կալիֆէ պիտի ձերբակալուի, որովհետեւ խառնէ Տրեֆիւսի գործին համար։

ՌՈՒՍՕ—ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Պատերազմի դաշտէն որոշ տեղեկութիւններ չը կան, ընդհակառակը աւելի շատ են իրարու հակասող լուրերը։ Ճապոնացիները շարունակ յառաջ կը խաղան երբեմն ընդհարումներ ունենալով ռուսներու հետ ու փոքրիկ կռուստներ տալով։

Անդրեւները արդէն սկսած են Մանջուրիոյ մէջ. ռուսները այդ իրենց համար նպաստաւոր կը համարեն, որովհետեւ կը կարծեն թէ ճապոնացիները սարսափելի ցեխերուն պատճառով չը պիտի կարենան շուտով իրենց ուղած տեղերը հասնիլ ու վճռական ճակատամարտ սկսիլ. մինչդեռ ռուսները ժամանակ պիտի ունենան իրենց թիւը շատցնել Ռուսիայէն հեռագրեթ հասնող զօրքերով։

Բորթ-Արթուրը դեռ կը դիմադրէ. թէեւ ճապոնացիները նոր ամրութիւններ գրաւելով աւելի մօտիկցեր են բուն քաղաքին։

Վլատիվոսթոքի ռուս նաւատորմիղը կրկին բաց ծով դուրս ելլելով ճապոնացի ամիրալ Քամիմուրայի հալածանքին ենթարկուեր է. բայց, ինչպէս կը հաղորդեն ռուսական հեռագիրները, կրցեր է խուսափիլ առանց վնաս մը տալու։

Իսկ ամիրալ Թոգո կը հաղորդէ թէ Բորթ-Արթուրի բերանին մօտերը ռուսական զրահաւորի նմանող մեծ պատերազմական նաւ մը եւս խորտակուեր է ականի հանդիպելով։

Այս ամսի վերջերը և եկողմիսը լի կերեւին պատերազմական մեծ դէպքերով։

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Բլիվեն.— Ա. Տ. Ձեր բաժնեգինը ստացուած է։

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Դրօշակին Վառոյի մէջ բաժանորդ գրուիլ ուզողները թող դիմեն Բաքէէն-Սիւնի ընթերցարանի վարչութեան։

Վառնա

ԱԶԴ

Հայրենիքի գաղափարը.— Մ. Վարանդեան՝ հրատարակութիւն Հ. Ց. Դաշնակցութեան ի Ժնէվ։ Գին 1 ֆր.

Վառնայի մէջ կարելի է գնել Բաքէէն-Սիւնի ընթերցարանէն։

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Вѣрность“ Варна